**Հարց** Ե՞րբ է մերժվում ջրային ոլորտում գործունեության լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտը:

**Պատասխան** Հայտը մերժվում է, եթե`

ա) Հայտատուի կողմից չեն պահպանվել լիցենզիայի դրույթներն ու պայմանները,

բ) Լիցենզիայի երկարաձգումը հակասում է գործող օրենքներին և ծրագրերին,

գ) Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, կեղծ կամ խեղաթյուրված,

դ) ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «Ջրային ոլորտում գործունեության լիցենզավորման տրամադրման կարգը հաստատելու մասին» կարգի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների պահանջներին,

ե) Հայտատուն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն զրկվել է հայցվող գործունեության տեսակով զբաղվելու իրավունքից,

զ) Լիցենզիան ստանալուց հետո անցած ժամանակաընթացքում փոփոխվել են լիցենզիա տրամադրելու պայմանները,

է) Լիցենզիա ստացած Անձը լիցենզիայով սահմանված ժամկետում գործունեություն չի ծավալել,

ը) Լիցենզիայով նախատեսված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի նկատմամբ լիցենզիա ունեցող Անձի իրավունքները դադարել են: